600.0163.13.05.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

13 մայիսի 2020 թվականի №163Ա
ք.Երևան

«ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի հոկտեմբերի 10-ի №383Ա որոշմամբ «ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0622 լիցենզիայի պայմանների 14-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 2019 թվականի հունիսի 11-ը Հանձնաժողով ներկայացնել «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով (այսուհետ՝ Նախագիծ), ինչը, սակայն, ընկերության կողմից չի կատարվել, որի արդյունքում նշված ժամկետը Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն համարվել է երկարաձգված մինչև 2020 թվականի փետրվարի 11-ը,

բ) Ընկերությունը 2020 թվականի փետրվարի 10-ի և 11-ի գրություններով Հանձնաժողով է ներկայացրել «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման նախագծային փաստաթղթերը, որոնց վերաբերյալ Հանձնաժողովը 2020 թվականի մարտի 13-ի №ՄՄ/34.3-Մ2-12/935-20 գրությամբ ներկայացրել է իր դիտարկումները, մասնավորապես նշելով, որ.

- Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարի կողմից 2013 թվականի ապրիլի 28-ին տրամադրված նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք) և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2015 թվականի մարտի 25-ի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությունը տրամադրված են «Անապատ-1» փոքր հիդրոէլեկտրակայանի համար և «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի վերաբերյալ որևէ տվյալ չեն պարունակում, իսկ նախագծային փաստաթղթերում առկա աշխատանքային նախագծի ընդհանուր բացատրագիրը, բացառությամբ «Ներածություն» բաժնի, ևս ամբողջությամբ վերաբերում է արդեն իսկ գործող «Անապատ-1» փոքր հիդրոէլեկտրակայանին,
- աշխատանքային նախագծի էլեկտրական մասը չի համապատասխանում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2020 թվականի փետրվարի 11-ին տրամադրված էլեկտրական էներգիայի բախշման ցանցին միացման №ՏՊ-570-35/0184 տեխնիկական պայմաններով նախատեսված պահանջներին,
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի №596-Ն որոշման 2-րդ կետով հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգի 9-րդ կետի 2-րդ ենթակետի և 13-րդ կետի բովանդակությունից բխում է, որ բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների կամ օրենքով նաև շրջակա միջավայրի պահպանության վրա ազդեցության փորձաքննություն պահանջող քաղաքաշինական փաստաթղթերը, ինչպիսին ըստ էության հանդիսանում է «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման նախագիծը, ենթակա են պետական համալիր փորձաքննության, ինչի պարագայում «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման նախագծի պետական համալիր փորձաքննություն անցած չլինելու հանգամանքը հիմնավորման կարիք ունի,

գ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2020 թվականի մարտի 13-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի №3 հավելվածի

7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու հարցի ուսումնասիրության նպատակով,

դ) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2020 թվականի մարտի 24-ի գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել պարզաբանումներ՝ մասնավորապես նշելով, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության ԲՓ20 փորձաքննությունը վերաբերում է «Անապատ-1» փոքր հիդրոէլեկտրակայանի նախագծի վերանայված տարբերակին, որտեղ առկա են «Կայան-1» և «Կայան-2» հասկացությունները, որոնք վերաբերում են «Անապատ-1» և «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայաններին, ինչպես նաև ներկայացրել է իր դիրքորոշումը աշխատանքային նախագծի էլեկտրական մասի և տեխնիկական պայմանների անհամապատասխանության վերաբերյալ: Ինչ վերաբերում է նախագիծը պետական համալիր փորձաքննության ենթարկելուն, ապա, ըստ Ընկերության, նշված պահանջն իր նկատմամբ կիրառելի չէ,

ե) Հանձնաժողովը վարչական վարույթի շրջանակում առկա փաստական հանգամանքների բազմակողմանի և օբյեկտիվ ուսումնասիրության համար փոխօգնության կարգով դիմել է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե՝ «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի նախագծային փաստաթղթերի՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված և փորձաքննությունների ենթարկված լինելու վերաբերյալ վերջիններիս դիրքորոշումը ստանալու նպատակով, և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը և 2-րդ մասը՝ 30 օրով երկարաձգել է վարչական վարույթի ժամկետը,

զ) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն 2020 թվականի ապրիլի 16-ի №01/11.1/2640-2020 գրությամբ հայտնել է, որ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի №596Ն որոշման №4 հավելվածի №3 ցանկի 4-րդ կետի 3-րդ ենթակետի՝ «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման աշխատանքային նախագիծը պատկանում է բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների թվին և նույն որոշման №2 հավելվածի 13-րդ և 15.1-րդ կետերի համաձայն՝ փոքր

հիդրոէլեկտրակայանների կառուցման աշխատանքային նախագծերը ենթակա են պետական համալիր փորձաքննության,

է) Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունը 2020 թվականի ապրիլի 22-ի №5/32/4559-2020 գրությամբ հայտնել է, որ 2012 թվականի մարտի 20-ին և 2015 թվականի մարտի 25-ին համապատասխանաբար տրվել են՝ ԲՓ-14 և ԲՓ-20 շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությունները «Անապատ-1» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և վերանայման նախագծերի վերաբերյալ, ինչպես նաև նշել, որ փորձաքննության դրական եզրակացություններ ստացած նախագծային փաստաթղթերում «Անապատ-1» և «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայանների անվանումներ չեն եղել, «Անապատ-1» փոքր հիդրոէլեկտրակայանի վերանայման նախագծի համար տրված ԲՓ-20 եզրակացությունը կարող է դիտարկվել որպես «Անապատ-1» և «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայանների եզրակացություն, քանի որ «Անապատ-1» փոքր հիդրոէլեկտրակայանի վերանայման նախագծի շրջանակներում ներկայացվել է երկու ջրընդունիչ հանգույցների, երկու խողովակաշարերի, թիվ-1 և թիվ-2 կայանային հանգույցների, գումարային ջրաէներգետիկ ցուցանիշների, ներառյալ՝ դրվածքային հզորության և այլնի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն.

ը) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած կայանի կառուցման նախագիծը դրական փորձագիտական եզրակացություններով Հանձնաժողով չներկայացնելու դեպքում նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը, իսկ 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքում՝ Կարգի №3 հավելվածի համաձայն երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

թ) Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած կայանի կառուցման նախագիծը դրական

փորձագիտական եզրակացություններով Հանձնաժողով ներկայացնելու՝ լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը Կարգի համաձայն 2-րդ անգամ երկարաձգվել է,

ժ) վարչական վարույթի շրջանակում իրավասու պետական մարմնի դիրքորոշման հիման վրա փաստվել է, որ Ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման աշխատանքային նախագիծը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի №596-Ն որոշման պահանջների չի ենթարկվել պետական համալիր փորձաքննության և չի կարող համարվել «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծ՝ դրական փորձագիտական եզրակացություններով, այսինքն, Ընկերությունը ԼԷ №0622 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված ժամկետում՝ մինչև 2020 թվականի փետրվարի 11-ը, Հանձնաժողով չի ներկայացրել «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, որի արդյունքում դրա ներկայացման ժամկետը համարվել է երկրորդ անգամ երկարաձգված՝ մինչև 2020 թվականի հոկտեմբերի 11-ը, և

հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը և №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Պարտավորեցնել Ընկերությանը՝ ԼԷ №0622 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված ժամկետում՝ մինչև 2020 թվականի փետրվարի 11-ը, «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով Հանձնաժողով չներկայացնելու համար սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի հուլիսի 25-ի №5320-02 գրությամբ Հանձնաժողով ներկայացված երաշխիքի համաձայն երաշխավորված 11,856,750 (տասնմեկ միլիոն ութ հարյուր հիսունվեց հազար յոթ հարյուր հիսուն) դրամ գումարից 5,928,375 (հինգ միլիոն ինը հարյուր քսանութ հազար երեք հարյուր յոթանասունհինգ) դրամը

900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 11,856,750 (տասնմեկ միլիոն ութ հարյուր հիսունվեց հազար յոթ հարյուր հիսուն) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2021 թվականի մայիսի 26-ը գործողության ժամկետով:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ.

1) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ԼԷ №0622 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված՝ Նախագծի ներկայացման ժամկետը համարվել է 2-րդ անգամ երկարաձգված՝ մինչև 2020 թվականի հոկտեմբերի 11-ը,

2) Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ երկրորդ անգամ երկարաձգված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում ԼԷ №0622 լիցենզիայի գործողությունը կկասեցվի,

3) իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
13 մայիսի 2020թ